## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

05 մարտի 2025 թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավարը, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Արայիկ Քոչարյանը, Սերյոժա Սարդարյանը, Գրիգոր Կարապետյանը, Էմմա Գասպարյանը, Արշակ Սրապյանը և Շուշանիկ Հակոբյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Պավլիկ Պապինյանը և Արմենուհի Ոսկանյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Թինա Բոջուկյանը:

Նիստին ներկա էին աշխտկազմի պատասխանատուներ:

***Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 12 անդամ***

**ՆԻՍՏԸ** - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 14.10-ին նիստը հայտարարեց բացված: Նա ողջունեց ներկաներին և առաջարկեց իր նախաձեռնությամբ օրակարգի 4-րդ կետում «Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին» որոշման նախագծում կատարել լրացում՝ նախագծում ավելացնել 4-րդ կետ՝ կառուցապատման իրավունքով, 50 տարի ժամկետով 1 լոտ հողամաս տրամադրելու վերաբերյալ: Ինչպես նաև

օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 10-13-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

10. Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումն ապահովելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Հ. Մացակյան

11. Փամբակ համայնքի ավագանու 02.02.2022թ-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» թիվ 08-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

12. Փամբակ համայնքի ավագանու անդամ Թիանա Բոջուկյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

13. Փամբակ համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

***Քվեարկությամբ, կողմ՝ 12 ձայների համաձայնությամբ որոշման նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:***

**Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով:**

***Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 017-Ա/:***

**Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը. Հաստատված օրակարգը՝**

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի մարտի 05-ի թիվ 02 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

4. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները քննարկելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

6. Փամբակ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

7. Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքներում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

8. Փամբակ համայնքի Փամբակ, Քարաբերդ և Բազում բնակավայրերի տարածքներում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

10. Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Հ. Մացակյան

11. Փամբակ համայնքի ավագանու 02.02.2022թ-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» թիվ 08-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

12. Փամբակ համայնքի ավագանու անդամ Թիանա Բոչուկյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

13. Փամբակ համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

**ԸՆԹԱՑՔԸ՝**

1. **ԼՍԵՑԻՆ** - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է.

01.01.01՝ Կառավարման ապարատ նախահաշվի, 4111՝ աշխատակիցների աշխատավարձ հոդվածից պակասեցվել է 1.055.000 դրամ և 4215՝ տրանսպորտային միջոցների ապահովագրում հոդվածից՝ կապված համայնքի ծառայողական մեքենաների շահագործումը դադարեցնելու հետ, պակասեցնել 950.000 դրամ:
Վերոգրյալ պակասեցված 2.005.000 դրամը և պահուստային ֆոնդից 12.731.000 դրամը /ընդհանուր՝ 14.736.000 դրամը/ տեղափոխել հետևյալ ծախսային ուղղություններով:
04.05.01՝ ճանապարհային տրանսպորտ նախահաշվի, ճանապարհների նորոգում՝ 5113 հոդվածում ավելացվել է 11.503.000 դրամ՝ ,,Ձորագյուղի ճանապարհի նորոգում՝ տուֆապատման միջոցով,, ծրագիրն ավարտին հասցնելու համար:
2025թ-ին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի հեղինակային և տեխնիկական հսկողների հետ կնքված պայմանագրերի արժեքները պետք է ավելացվեն 20%-ով՝ կապված ավելացված արժեքի հարկի հետ: Կատարվել են վերահաշվարկներ, որի արդյունքում տարբեր ծախսային ուղղություններով անհրաժեշտ է ավելացնել ընդհանուր՝ 2.003.000 դրամ:
01.01.01՝ Կառավարման ապարատ նախահաշվի, էլեկտրաէներգիայի ծախս 4212 հոդվածում ավելացվել է 1.230.000 դրամ, Փամբակի հանդիսությունների սրահի և Բազումի համայնքային կենտրոնի /գործող վարչական կենտրոնի/ համար եռաֆազ նոր աբոնենտներ գրանցելու համար:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 018-Ն/:***

**2. ԼՍԵՑԻՆ** - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ 2024 թվականի դեկտեմբերից մինչև 2025թ. փետրվարը Փամբակ համայնքի կողմից ձեռք է բերվել, ինչպես նաև իրականացված ծրագրերի արդյունքում հանձնման-ընդունման ակտերով համայնքին են հանձնվել 3.452.400 ՀՀ դրամի հիմնական միջոց:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 019-Ա/:***

**3. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է տալ համաձայնություն 6 լոտ հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, 2 լոտ հողամասերը վարձակալության իրավունքով հատկացնելուն և 1 լոտ հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

***Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 020-Ա/:***

**4. ԼՍԵՑԻՆ** - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները քննարկելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 28.12.2018թ. թիվ 01/17.1/10285-18 հանձնարարականի և ՀՀ Լոռու մարզպետի 03.09.2024թ. N 610-Ա որոշման, Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից 2024թ. նոյեմբերի 18-ից 29-ը Փամբակ համայնքում իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն: Հսկողությունն իրականացվել է ՏԻՄ-երի լիազորությունների, ֆինանսների, հողօգտագործման, կոմունալ տնտեսության, պաշտպանության, սոցիալական պաշտպանության, առողջապահության, տրանսպորտի, քաղաքաշինության, շրջակա միջավայրի պահպանության, առևտրի և ծառայությունների, գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի, զբոսաշրջության, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 7 նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքներն ամփոփելուց հետո կազմվել է արձանագրություն, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ: Առաջարկներն ընդունվել են ի գիտություն և ի կատարում՝ սահմանված ժամկետներում շտկվել են, կամ շտկման փուլում են:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 021-Ա/:***

**5. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռախսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետի և 82.1-ին հոդվածի, անհրաժեշտ է հաստատել Փամբակ համայնքի 2025թ-ի տարեկան աշխատանքային պլանը: Պլանի մեջ ներառվել են սուբվենցիոն և այլ ծրագրերով 2025թ-ին իրականացվելիք աշխատանքները: Պլանը բաղկացած է 11 կետից՝ ծրագրերից.

1. Ձորագետ բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող շենքի վերանորոգում /2-րդ փուլ/:
2. Վահագնիի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում:
3. Վահագնաձոր բնակավայրում մանկապարտեզի շենքի վերանորոգում:
4. Լեռնապատ բնակավայրի հանդիսությունների սրահի կառուցում:
5. Անտառամուտ բնակավայրերի փողոցների նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով:
6. Մարգահովիտ բնակավայրերի փողոցների նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով:
7. Փամբակ բնակավայրի փողոցի նորոգում ասֆալտապատման միջոցով:
8. Արջուտ բնակավայրի փողոցի նորոգում ասֆալտապատման միջոցով:
9. Մասնակցային բյուջետավորում 2025:
10. «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի կողմից իրականացվող «Մարդակենտրոն ծառայությունների նախագծում» երկրորդ բաղադրիչի:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 022-Ա/:***

**6. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքներում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «Ա.Ա.Բ Պրոյեկտ» ՍՊԸ-ի 12.12.2024թ-ի գրության, ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով Քարաբերդ բնակավայրում անց է կացվել հանրային լսումներ, որի արդյունքների վերաբերյալ կազմվել է արձանագրություն: Օրենսդրությամբ սահմանված կարգով առաջարկում է տալ նախնական համաձայնություն /կամ անհամաձայնություն/ «Ա.Ա.Բ Պրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի քվարցային գաբրոդիորիտների հանքավայրի ընդլայնման օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ» նախատեսվող գործունեության իրականացմանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քննարկման արդյունքում ավագանու անդամները որոշեցին քվեարկել վերը նշված գործողությանը անհամաձայնություն տալու հարցը:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

***Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 023-Ա/:***

**7. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի Փամբակ, Քարաբերդ և Բազում բնակավայրերի տարածքներում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն /կամ անհամաձայնություն/ տրամադրելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «Կոմպոզիտ մետալ» ՍՊԸ-ի 04.12.2024թ-ի ծանուցման, ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով Փամբակ, Քարաբերդ և Բազում բնակավայրում անց են կացվել հանրային լսումներ, որոնց արդյունքների վերաբերյալ կազմվել է արձանագրություն և ավագանու որոշման նախագիծ՝ / «Կոմպոզիտ մետալ» ՍՊԸ-ի կողմից Փամբակ համայնքի Փամբակ, Քարաբերդ և Բազում բնակավայրերի տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն /կամ անհամաձայնություն տալու վերաբերյալ: Սակայն 03.03.2025թ-ին «Կոմպոզիտ մետալ» ՍՊԸ-ն դիմել է համայնքի ղեկավարին՝ հրաժարվելով 04.12.2024թ-ի ծանուցմամբ ներկայացված համաձայնություն տալու խնդրանքից, առաջարկելով տվյալ ծանուցումը չդիտարկել և ընթացք չտալ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քննարկման արդյունքում ավագանու անդամները որոշեցին քվեարկել վերը նշված գործողությանը անհամաձայնություն տալու հարցը:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 024-Ա/:***

**8. ԼՍԵՑԻՆ** - Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումն ապահովելուն համաձայնություն տալու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման և զարգացման ծրագրերի բաժնի պետ Համիկ Մացակյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության կողմից ֆինանսավորվող և Եվրոպական միության ու Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից համաֆինանսավորվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում GIZ -ը հայտարարում է հայտերի ներկայացման հրավեր համայնքների, մասնավոր հատվածի կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար:
Ծրագիրը ներառում է ֆինանսավորման հետևյալ չորս ուղղությունները.
1. Վերականգնվող էներգիա և էներգաարդյունավետություն
2. Համայնքային ծառայություններ
3. Տեղական տնտեսական զարգացում
4. Կանանց հզորացում և ներառականություն:

Ծրագրին մասնակցելու նպատակով զեկուցողը առաջարկում է տալ նախնական համաձայնություն Փամբակ համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին և դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեից ծրագրի ընդհանուր արժեքի առնվազն 20%-ի չափով համաներդրում կատարելուն:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 025-Ա/: Ավագանու անդամ Ս. Մարանդյանը չի մասնակցել քվեարկությանը:***

**9. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի ավագանու 02.02.2022թ-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» թիվ 08-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռախսա Մինասյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ 13 փետրվարի 2025 թվականի N 007-Ա որոշմամբ ավագանին ընդունել է նոր կանոնակարգ՝ համամասնական ընտրակարգով ընտրված ավագանիների համար: Առաջարկում է ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 02.02.2022թ-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» թիվ 08-Լ որոշումը:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 026-Լ/: Ավագանու անդամ Ս. Մարանդյանը չի մասնակցել քվեարկությանը:***
**10. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի ավագանու անդամ Թիանա Բոջուկյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռախսա Մինասյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի, Փամբակ համայնքի ավագանու 13.02.2025 թ-ի «Փամբակ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» թիվ 07-Ա որոշմամբ հաստատված կանոնակարգի 15-րդ գլխի 233-րդ կետի, հաշվի առնելով Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից Փամբակ համայնքի ՏԻՄ-երի սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացված իրավական վերահսկողության արդյունքները, այն հանգամանքը, որ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ավագանու անդամ Թիանա Ռազմիկի Բոջուկյանը Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ հերթական նստաշրջանի /12.09.2023-27.12.2023թթ./ ընթացքում կայացած թվով 5 նիստից բացակայել է 4-ից և որևէ հիմնավորում չի ներկայացրել բացակայությունները հարգելի համարելու վերաբերյալ, առաջարկում է «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ավագանու անդամ Թիանա Ռազմիկի Բոջուկյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 8, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 3, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 027-Ա/:***
**11. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռախսա Մինասյանը:
Զեկուցողը ներկայացրեց, **իրավական ակտի ընդունման նպատակը և կարգավորման անհրաժեշտությունը.**
«Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածով սահմանված է, որ հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգն ու ձևը հաստատում է համայնքի ավագանին՝ նպատակ հետապնդելով կանոնակարգել հանրային հավաքների մասին իրազեկումների թափանցիկությունն ու հավաստիությունը:

ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով ՀՀ օրենսդրությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 17.02.2025թ. թիվ ԴԻս/14.1/5364-2025 հանձնարարականը և Լոռու մարզպետի աշխատակազմի 18.02.2025թ-ի 01/107.4.2/01424-2025 գրությունը, ձեր քննարկմանն է ներկայացվում «Համայնքում հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագիծը:

Կարգի ընդունումը նպատակ է հետապնդում համայնքի աշխատակազմի մակարդակում կարգավորելու հանրային հավաքների մասին իրազեկումների հուսալի և ապահով շրջանառությունը:

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է գործող օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան ապահովել համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գործընթացները:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

***Քվեարկությամբ, կողմ*** *՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 028-Լ/:*

**12. ԼՍԵՑԻՆ** - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2025 թվականի ապրիլի 14-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

***Քվեարկությամբ,*** *կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0* ***ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 029-Ա/:***

Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2025 թվականի ապրիլի 14-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 14.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆԻ

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ____________

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ ____________

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ ____________

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ ____________

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ ____________

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ ____________

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ ____________________

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ ____________________

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ ____________________

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ ____________________

ՍՐՍՊՅԱՆ ԱՐՇԱԿ ____________________

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ ____________________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2025թվականի N 017-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025Թ-Ի ՄԱՐՏԻ 05-Ի ԹԻՎ 02 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի մարտի 05-ի թիվ 02 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1.ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի մարտի 05-ի թիվ 02 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:
4. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները քննարկելու մասին:
6. Փամբակ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
7. Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքներում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին:
8. Փամբակ համայնքի Փամբակ, Քարաբերդ և Բազում բնակավայրերի տարածքներում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին:
9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

10. Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին:
11. Փամբակ համայնքի ավագանու 02.02.2022թ-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» թիվ 08-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
12. Փամբակ համայնքի ավագանու անդամ Թիանա Բոջուկյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:
13. Փամբակ համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2025թվականի N 018-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 157-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 157-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի եկամուտների մասում կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 1-ի:

2) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ գործառնական դասակարգման, կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 2-ի:

3) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, կատարել փոփոխություն համաձայն հատված 3-ի:

4) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդում կամ դեֆիցիտում /պակասուրդում/ կատարել փոփոխություն համաձայն հատված 4-ի:

5) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղություններում կամդեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներում կատարել փոփոխություն համաձայն հատված 5-ի:

6) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, կատարել փոփոխություն համաձայն հատված 6-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

05 ՄԱՐՏԻ 2025թվականի N 019-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

Հավելված
Փամբակ համայնքի ավագանու
« 05 » մարտի 2025 թ-ի թիվ 19-Ա որոշման

2024 թվականի դեկտեմբերից մինչև 2025թ. փետրվար ամիսը ձեռք բերված հիմնական միջոցների ցանկ

| Հ/Հ | Հիմնական միջեցի անվանումը | Ձեռքբերման տարեթիվը | Առկայությունը | | Գինը /դրամ/ | Գումարը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Փաստացի (քանակը) | հաշվապահական տվյալներով (քանակը) | | |
| 1 | Տեսացրիչ Android Led,Nativ FHD լուսային լամպով | 2025թ. | 1 | 1 | 147600 | 147600 |
| 2 | Տեսախցիկ Canon,հիշողության քարտով և պայուսակով | 2025թ. | 1 | 1 | 305000 | 305000 |
| 3 | Գործագործության փայտե դազգահ | 2025թ. | 1 | 1 | 265000 | 265,000 |
| 4 | Արևային ֆոտովոլտային կայան | 2025թ. | 1 | 1 | 1,596,000 | 1,596,000 |
| 5 | Նոթբուք համակարգիչ ACER,մկնիկով և NATE Taruca NTO-2031 պայուսակով | 2025թ. | 1 | 1 | 493,800 | 493,800 |
| 6 | <<ՀԾ-Հաշվապահ 7>> համակարգ 3 աշխատատեղի համար | 2024թ. | 1 | 1 | 645,000 | 645,000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | 6 | 6 | 3452400 | 3452400 |

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ Կ. ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2025թվականի N 020-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ԱՃՈՒՐԴԻ ՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001 թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելուն:

2. Աճուրդ-վաճառքով օտարվում են հողամասեր.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրի 06-034-0065-0026 ծածկագրով 0,114555 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0249-0011 ծածկագրով 0,122167 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 140000 /մեկ հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:

3) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Ձորագյուղ բնակավայրի 06-066-0114-0051 ծածկագրով 0,39019 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 440000 /չորս հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:

4) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0245-0015 ծածկագրով 0,09580 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 110000 /հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:

5) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0212-0567 ծածկագրով 0,42315 հա գյուղատնտեսական

նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 480000 /չորս հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:
6) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-070-0251-0010 ծածկագրով 0,3510 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով 25 տարի ժամկետներով տրամադրվում են հողամասեր.
1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0346-0016 ծածկագրով 0,519904 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի վարելահող՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ:
2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Ձորագյուղ բնակավայրի 06-066-0117-0098 ծածկագրով 0,4078 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ:

Վարձակալության լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

4. Կառուցապատման իրավունքով, 50 տարի ժամկետով տրամադրվում է ընդհանուր օգտագործման հողամաս.
1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0681-0002 ծածկագրով 0.0190 հա բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամաս: Հողամասի տարեկան կառուցապատման վճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

Կառուցապատման մրցույթի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԱՆԴՅԱՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ Ս
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇ
ՔՈՉԱՐՅԱՆ Ա

ՀԱ ...ՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2025թվականի N 021-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Քննարկել և ընդունել ի գիտություն Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից Փամբակ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները:

2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ակտում արձանագրված թերությունների և բացթողումների ուղղման և կանխարգելման ուղղությամբ:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

05 ՄԱՐՏԻ 2025թվականի N 022-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով և 82.1-ին հոդվածով, հիմք ընդունելով Փամբակ համայնքի ավագանու 12.05.2022թ-ի «ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի 2022-2026 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 58-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացրած համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման մեթոդական ուղեցույցը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հաստատել Փամբակ համայնքի 2025թ-ի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2025թվականի N 023-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետերով, «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով «Ա.Ա.Բ Պրոյեկտ» ՍՊԸ-ի 12.12.2024թ-ի գրությունը, ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով անցկացված հանրային լսումների արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը և տեսաձայնագրությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ անհամաձայնություն «Ա.Ա.Բ Պրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի քվարցային գաբրոդիորիտների հանքավայրի ընդլայնման օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ» նախատեսվող գործունեության իրականացմանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԻ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ Ղ... ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2025թվականի N 024-Ա

### ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՄԲԱԿ, ՔԱՐԱԲԵՐԴ ԵՎ ԲԱԶՈՒՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետերով, «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով «Կոմպոզիտ մետալ» ՍՊԸ-ի 04.12.2024թ-ի գրությունը, ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով անցկացված հանրային լսումների արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը և տեսաձայնագրությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ անհամաձայնություն «Կոմպոզիտ մետալ» ՍՊԸ-ի կողմից Փամբակ համայնքի Փամբակ, Քարաբերդ և Բազում բնակավայրերի տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ նախատեսվող գործունեության իրականացմանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրը:

| Կողմ -10 | Դեմ -0 | Ձեռնպահ -2 |
|---|---|---|
| ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ | | ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ |
| ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ | | ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ | | |
| ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ | | |
| ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ | | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ | | |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ | | |
| ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ | | |
| ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ | | |
| ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2025թվականի N 025-Ա

### ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Փամբակ համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:
2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեից ծրագրի ընդհանուր արժեքի առնվազն 20%-ի չափով համաներդրում կատարելուն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2025թվականի N 026-Լ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 02.02.2022Թ-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 08-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 24.12.2024թ. թիվ ԴԽ/14.1/42020-2024 հանձնարարականը և Լոռու մարզպետի աշխատակազմի 07.01.2025թ-ի N 01/107.4.1/00009-2025 գրությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

Ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 02.02. 2022թ-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» թիվ 08-Լ որոշումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

05 ՄԱՐՏԻ 2025թվականի N 027-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԹԻԱՆԱ ԲՈՋՈՒԿՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով, Փամբակ համայնքի ավագանու 13.02.2025 թ-ի «Փամբակ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» թիվ 07-Ա որոշմամբ հաստատված կանոնակարգի 15-րդ գլխի 233-րդ կետով, հաշվի առնելով Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից Փամբակ համայնքի ՏԻՄ-երի սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացված իրավական վերահսկողության արդյունքները, այն հանգամանքը, որ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ավագանու անդամ Թիանա Ռազմիկի Բոջուկյանը Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ հերթական նստաշրջանի /12.09.2023-27.12.2023թթ./ ընթացքում կայացած թվով 5 նիստից բացակայել է 4-ից և որևէ հիմնավորում չի ներկայացրել բացակայությունները հարգելի համարելու վերաբերյալ, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ավագանու անդամ Թիանա Ռազմիկի Բոջուկյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել՝ Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ հերթական նստաշրջանի /12.09.2023-27.12.2023թթ./ ընթացքում կայացած թվով 5 նիստից 4-ին անհարգելի բացակայության պատճառով:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը ներկայացնել համապատասխան Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Կողմ -8
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -1
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

Ձեռնպահ -3
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎ [illegible] ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2025թվականի N 028-Լ

## ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 17.02.2025թ. թիվ ԴԽ/14.1/5364-2025 հանձնարարականը և Լոռու մարզպետի աշխատակազմի 18.02.2025թ-ի 01/107.4.2/01424-2025 գրությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հավելված N 1
Փամբակ համայնքի ավագանու
« 05 » մարտի 2025 թվականի
N 28- Լ որոշման

# Կ Ա Ր Գ
# ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Փամբակ համայնքում հանրային հավաքներ անցկացնելու իրազեկումների գրանցամատյանի **(այսուհետ՝ գրանցամատյան)** վարման հետ կապված հարաբերությունները:
2. Գրանցամատյանը համայնքի վարչական տարածքում հավաքներ անցկացնելու վերաբերյալ «Հավաքների ազատության մասին» օրենքով սահմանված կարգով Փամբակ համայնքի ղեկավարին (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացրած գրանցված իրազեկումների վերաբերյալ և լիազոր մարմնի կամ նրա լիազորած անձի կողմից ձեռնարկված քայլերի մասին տեղեկությունների ամբողջականությունն է:
3.Գրանցամատյանը խիստ հաշվառման հատուկ մատյան է, տպագրվում է մեկ օրինակից, վարվում է թղթային տարբերակով:
4. Գրանցամատյանի պահպանումը և վարման պարտականություններ իրականացվում է լիազոր մարմնի կողմից լիազորած անձի պատասխանատվությամբ և այն պետք է սահմանված լինի համապատասխան իրավական ակտով (որոշում, կարգադրություն):
5. Գրանցամատյանը կարում, էջերը հերթական համարակալմամբ համարակալում, վերջին էջում էջերի քանակը՝ տառերով և թվով, այն կազմելու օրը, ամիսը, տարին նշում և ստորագրությամբ և կնիքով վավերացնում է՝ համայնքի աշխատակազմի քարտուղարը:
6. Հանրային հավաքներ անցկացնելու մասին լիազոր մարմնին ներկայացված իրազեկումները անհապաղ գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանք ստանալու հերթականության: Մուտքագրման համարը գրառվում է նաև ներկայացված իրազեկման փաստաթղթի վրա: Յուրաքանչյուր տարվա գրանցումների համարակալումը կատարվում են տարեսկզբից: Յուրաքանչյուր օրացուցային տարվա համար համարակալումը սկսվում է 1-ից:
7. Գրանցամատյանը ըստ սյունակների լրացվում է հետևյալ ձևով՝
1) 1-ին սյունակում թվերով գրառվում է իրազեկման մուտքագրման հերթական համարը.
2) 2-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազմում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.
3) 3-րդ սյունակում գրառվում է իրազեկման ներկայացման ձևը՝ գրավոր՝ անձամբ կամ փոստով.
4) 4-րդ սյունակում գրառվում է հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները.

5) 5-րդ սյունակում գրառվում է հավաքի տեսակը՝ հավաք կամ երթ կամ հավաք և երթ.

6) 6-րդ սյունակում գրառվում է հավաքի վայրը.

7) 7-րդ սյունակում գրառվում է հավաքի, սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը.

8) 8-րդ սյունակում գրառվում է հավաքի նպատակը.

9) 9-րդ սյունակում գրառվում է մասնակիցների սպասվող թիվը.

10) 10-րդ սյունակում գրառվում է երթի ուղին և ժամանակացույցը, եթե նախատեսված է երթի անցկացում, այլապես անհրաժեշտ է կատարել գծանշում.

11) 11-րդ սյունակում գրառվում են ՝ հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաների կամ տեխնիկական միջոցների (պաստառներ, ջահեր, բարձրախոսներ և այլն), կարգադրիչների նախատեսվող թվի, վարձակալությամբ տրված տարածքներում վարձակալի համաձայնության, իրավաբանական անձի կողմից հավաք կազմակերպվելու դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավար մարմնի կամ կառավարման մարմնի որոշման վերաբերյալ և այլ տեղեկությունները.

12) 12-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

13) 13-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.

14) 14-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

15) 15-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե նախատեսված է հավաքը անցկացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, թանգարանների ու գրադարանների տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ նախատեսված վայրում, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.

16) 16-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

17) 17-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե լիազոր մարմինը հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.

18) 18-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման քննարկման օրը, ամիսը, տարեթիվը.

19) 19-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

20) 20-րդ սյունակում գրառվում է հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը.

21) 21-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

22) 22-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը (պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ կամ կազմակերպչին՝ առձեռն հանձնելու միջոցով), օրը, ամիսը, տարեթիվը.

23) 23-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին ՀՀ ոստիկանությանը տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

24) 24-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին գրությունը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը.

25) 25-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմկի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.

26) 26-րդ սյունակում գրառվում է այո կամ ոչ՝ լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկելու մասին.

27) 27-րդ սյունակում գրառվում է դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը, եթե լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկվել է, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում:

Հավելված N 2
Փամբակ համայնքի ավագանու
« 05 » մարտի 2025 թվականի
N 28-Լ որոշման

# ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ

ՍԿՍՎԱԾ Է՝ ____________________
(օրը, ամիսը, տարին)

ԱՎԱՐՏՎԱԾ Է՝ ____________________
(օրը, ամիսը, տարին)

## Հավաքի անցկացման ներկայացված իրազեկման և հավաքի վերաբերյալ տեղեկություններ

| N Հ/հ | Հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազմում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Իրազեկումը ներկայացնելու ձևը | Հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները | Հավաքի տեսակը | Հավաքի վայրը | Հավաքի սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը | Հավաքի նպատակը | Մասնակիցների սպասվող թիվը | Երթի ուղին և ժամանակացույցը | Լրացուցիչ տեղեկություններ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 2 | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | |

## Հավաքի անցկացման մասին հանրությանը տեղեկացնելու և պետական մարմիններից հավաքի անցկացման վերաբերյալ ստացված կարծիքների մասին տեղեկություններ

| Ներկայացված իրազեկման պատճենը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Ներկայացված իրազեկման պատճենը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման քննարկման օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| | | | | | | | |

| Հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման վերաբերյալ տեղեկություններ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը, օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին ՀՀ ոստիկանությանը տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին գրությունը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը բողոքարկվե՞լ է դատական կարգով | Դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը |
| 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

Գրանցամատյանը կարված է, բաղկացած է՝_______ _______________ էջից:
(տառերով) (թվով)

Գրանցամատյանը կազմվել է՝ _______________ :
(օրը, ամիսը, տարին)

Համայնքի աշխատակազմի

քարտուղար՝ _______________ _______________

Կ.Տ (ստորագրություն) (անուն, ազգանուն)

# ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## «ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փամբակ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող «Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջների կարգավորումների համատեքստում:

**Իրավական ակտի ընդունման նպատակը և կարգավորման անհրաժեշտությունը.**

«Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածով սահմանված է, որ հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգն ու ձևը հաստատում է համայնքի ավագանին՝ նպատակ հետապնդելով կանոնակարգել հանրային հավաքների մասին իրազեկումների թափանցիկությունն ու հավաստիությունը:

Ելնելով վերոգրյալից համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Համայնքում հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագիծը:

**Իրավական ակտի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին.**

Ավագանու որոշման նախագծի ընդունումն այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

**Իրավական ակտի ընդունման կապակցությամբ բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին.**

Ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

**Նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթն ու նպատակը.**

Նախագիծը կրում է ներքին **(լոկալ)** բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք ակտն ընդունող մարմնի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից, և ուղղված է համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը հաստատելուն: Կարգի ընդունումը նպատակ է հետապնդում համայնքի աշխատակազմի մակարդակում կարգավորելու հանրային հավաքների մասին իրազեկումների հուսալի և ապահով շրջանառությունը:

**Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է գործող օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան ապահովել համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գործընթացները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ______________ ______________

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

*Օրինակելի ձև*

______________________
(օրը, ամիսը, տարին)

______________ համայնքի ղեկավար ______________________
(համայնքի անվանումը) (համայնքի ղեկավարի անունը, ազգանունը)

ՀՀ քաղաքացի ____________________ - ից
(անունը,հայրանունը, ազգանունը)

Բնակության և ծանուցման հասցե՝

______________________________________________________:

**ԻՐԱԶԵԿՈՒՄ**

Հանրային հավաքի անցկացման մասին

Հարգելի (պարոն, տիկին) ________________________
(համայնքի ղեկավարի ազգանունը)

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ:

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

1. Հավաքի վայրը՝

______________________________________________________

2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝

________________________________________

3. Հավաքի նպատակը՝

______________________________________________________

4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ _____

5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝______________________________________________

______________________________________________________

______________________________________________________

__________:

6. Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ _____ մարդ:

7. Հավաքի ընթացքում (ժամը __00-__00) նախատեսվում է երթ՝

______________________

(նշել երթուղին)

8. Հավաքի կազմակերպչի տվյալները՝

Ազգանուն, անուն, հայրանուն՝

______________________________________________________________________________

___,

Անձնագիր՝_________, տրված __.__.20__, ___-ի կողմից, Հեռախոս՝ ________, Փոստային հասցե՝ ____ ՀՀ, ____________________________________, Էլեկտրոնային հասցե՝ _____________________________ :

9. Հավաքի ղեկավարի տվյալները՝ (լրացնել եթե հավաքի ղեկավարումը հանձնարարվել է այլ անձի)

Ազգանուն, անուն, հայրանուն՝

______________________________________________________________________________

____, Անձնագիր՝ __________, տրված __.__.20__, ____-ի կողմից, Հեռախոս՝ __________ Փոստային հասցե՝ ____ ՀՀ, _____________________________________ Էլեկտրոնային հասցե՝ _____________________________:

Խնդրում եմ՝

1. Օրենքի սահմաններում ապահովել նշված հավաքին մասնակցողների իրավունքների լիարժեք իրացումը:

2. Սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով:

Առդիր՝ հավաքի կազմակերպչի անձնագրի պատճենը՝ -- թերթ:

Հավաքի կազմակերպիչ՝ ______________ ______________

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2025թվականի N 029-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը և ժամը սահմանել 2025 թվականի ապրիլի 14-ին, ժամը 14:00-ին:

2. Նիստը կազմակերպել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ գ. Փամբակ, 1-ին փողոց, 23 շենք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ